ՃԿԱ.

Ցաւուրս յայսոսիկ եղեն մեծամեծ հրդեհք ի կոստանդինուպոլիս վասն մեղաց մերոց, մին եղև ի սամաթիայ[1] ի տօղրուեօլն. եկ հուր ի տանէ մէհանէճի ուզուն եօրկիին, որ և փութով կամեցեալ փախչիլ ընդ պատուհանն անկաւ ի փողոցն, և անդէն մեռաւ խորտակմամբ գագաթան իւրոյ, և թոռն նորա ութամեայ այրեցաւ ի նմին սենեկի։ Եւ այրեցան տունք բազումք յունաց և հայոց, և մի միայն տուն ուղղափառի պիլէզիկճի երեմիային[2]։ Յետ աւուրց ինչ[3] եղև հրդեհ մեծ ի յօրթագեղի եալըն, ուր այրեցան իբրև երկոտասան ապարանք հայոց մեծամեծաց որդւոց ռաստին և ծերունւոյն, և այլոց։ Յետ ութ աւուր եղև դարձեալ հրդեհ մեծ ի մանղըր տառապխանայն, և այրեաց մինչև ի թաւուշան թաշըն. և այրեցան բազում տունք և ապարանք տաճկաց...։ Թուի թէ յայս երկուս տարիս ոչ մնաց տեղի ի կոստանդինուպոլիս, որ ոչ այրեցաւ...։ Ի 14 մարտի ըստ նորոյն հանդիսացաւ Կաթուղիկոս հայոց Ահագին Սահակ վարդապետն յամենայն ձայնաւոր պատարագս, որք մատուցան բաց ի նոյն օրին, զի յայլ աւուրս կիւրակէից աղուհացից ծածկեալ մատուցանի։ Եւ վասն Սարգիս վարդապետին ասեն թէ տալոց են նմա զառաջնորդութիւն զմիւռնոյ։ (Հ. Իգնատիոս առ Մելգոնեան, 1756 մարտի 19. Կ. Պոլիս)։

ՃԿԲ.

Մեսրոպ վարդապետն գրեալ էր ի Հռոմայու, թէ ի մարտի ամսոյս եզերի տպագրութիւն քրքին Մծբնայ, և սկսանին զլէթերայ Էնչիքլիքայն[4] տպել, զոր մեք թարգմանեցաք։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ [Անանեանց], 1756 մարտ 22. [Ս. Ղազար])։

ՃԿԳ.

Պիլէզիկճի եսայիին տղան տիրացու պօղոսն գնացեալ առ պատրիարգն խօսեալ է վասն բազմաց. և զկնի ասէ ցնա պատրիարգն. զինչ ասեն Մխիթարեանքն, վասն անարգական բանից եղելոց ի նարեկամեկնիչն զՄխիթարայ աբբայի։ Պատասխանեալ է, ասեն, թէ ոչ հաւատամք, թէ նա իցէ եղեալ զբանն զայն։ Ընդ որ պատրիարգն յոյժ հաճեալ է։ Եւ ասէ, Բանն աս չէ. այժմ ոմանք գնոր գիրք մի ևս արարեալ են ընդդէմ նոյն աբբային. և ստիպեն զիս տալ տպագրել. արդ քեզ որպէս թուի։ Պատասխանեալ է. Դու բարւոք գիտես տէր. սակայն յոյժ պատշաճաւոր է խափանելն. ասէ. տեսցուք՝ մէկ բան մի կանեմք։ Եւ շարադրութիւն այսր գրքիս է ստոյգ. որպէս և զայլ գիրք մի արարեալ է պէսպէս յօհաննէսն և զամպուռն, զորոյ զմին գնեցի վասն վանուց և ընթերցայ, յորում նախատէ յոյժ զաբբայ հայրն մեր։ Իսկ զտպարան սարգիս վարդապետին արգելեալ է պատրիարգն յառաջանալ, որպէս և նոյն փաթրիքն ցտիրացու պօղոսն ասացեալ է։ (Հ. Մկրտիչ առ Մելգոնեան, 1756 մայիսի 14. [Կ. Պոլիս])։

ՃԿԴ.

Ցաւուրս յայսոսիկ եկն եմուտ ի կոստանդինուպոլիս և Մուստա[ֆ]այ փաշայ վէզիրն. և այժմ ի խաղաղութեան է քաղաքս. և հացն սպիտակացաւ, և առատացաւ ամենայն ինչ ողորմութեամբ

---

1. «Ի Փետր.ի 28» (Հ. Զաք. առ Մելգ. 1756 Մարտի 19)։
2. «Այրեցան տունք աւելի քան զյիսուն». (Անդ)։
3. «Ի մարտի ԺԲ.» (Անդ)։
4. Ընդհանրական թուղթ։